Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2013 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 76 առաջարկություն, դիմում և բողոք, որից՝ 9-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից:

Դիմումները՝ ըստ բնույթի	**Ընդամենը**	**Պատասխանվել է**	**Տրվել է դրական լուծում**	**Տրվել է պարզաբանում**	**Մերժվել է**	**Ծանոթություն**
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուների ներկրման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	8	8	8			
Անորակ ցորենի սերմացուի պատճառով կրած վնասը փոխհատուցելու մասին	6	6		6		6 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի և շահառուների միջև կնքված փոխառության համաձայնագրի՝ նախատեսված քանակի և որակի սերմացուի հետ վերադարձը չապահովելու դեպքում շահառուները պարտավոր են ստացած աշնանացան ցորենի յուրաքանչյուր կիլոգրամ էլիտային վերարտադրության սերմացուի դիմաց հետ վերադարձնել 700 դրամ: Պայմանագրերում անհաղթահա-

						ռելի ուժի ազդեցություն (ֆորս մաժոր) նախատեսված չէ: Սակայն, հաշվի առնելով 2012 թվականի բնակլիմայական անբարենպաստ պայմանները, շահառուների նկատմամբ կիրառվել է անհատական մոտեցում՝ ՀՀ կառավարության կողմից շահառուների պարտավորությունները մասնակիորեն զիջվել են և 700 դրամի փոխարեն յուրաքանչյուր կիլոգրամ սերմացուի դիմաց հնարավորություն է ընձեռվել <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ին վճարել 420 դրամ, որի մասին շահառուներին գրավոր տեղեկացվել է և առաջարկվել կնքել համապատասխան համաձայնագիր և վճարման ժամանակացույց՝ յուրաքանչյուր ամսվա համար 20 տոկոսի չափով: Առաջարկված պայմանները չընդունած և համաձայնագրեր չկնքած շահառուների գործերը սահմանված կարգով ներկայացվել են դատական ատյաններին:
Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները վերցված են հաշվառման և կքննարկվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության Հայաստանի Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների բաշխման հանձնաժողովի կողմից և արդյունքների

						մասին լրացուցիչ կտեղեկացվի:
Անտառային հողերի վարձակալության թույլտվություն տալու և վարձակալության նոր պայմանագիր կնքելու մասին	6	5		5		3 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողերի վարձակալության իրավունքը և նոր պայմանագիր կնքելու թույլտվությունը տրամադրվում է համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ լիազոր մարմնի կողմից անցկացվող մրցույթի արդյունքում: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կհայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և www.minagro.am կայքերում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ օրենսդրության համաձայն անտառային պետական ֆոնդի հողերը կառուցապատման նպատակով չեն կարող տրամադրվել վարձակալության: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ անտառային օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անտառներում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների արածեցումն արգելվում է: Միաժամանակ առաջարկվել է արոտավայրերից օգտվելու համար

						ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի 1477-Ն և 14.04.2011 թվականի 389-Ն որոշումների համաձայն համապատասխան պայմանագիր կնքել: **1 դիմում ընթացքի մեջ է:**
<<Թամարա ֆրութ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվող օրգանիկ այգիների ստեղծման ծրագրում ընդգրկելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները քննարկվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի մայիսի 25-ի 137-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից և որոշվել տեղում ուսումնասիրել նրանց հողատարածքում օրգանական գյուղատնտեսության վարման հնարավորությունները: Անհրաժեշտ պայմանները բավարարելու դեպքում կքննարկվի նրանց ծրագրում ընդգրկելու հարցը:
Վարկ տրամադրելու, վարկի մարման ժամկետն երկարաձգելու և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին	4	3	1	2		1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: **1 դիմում ընթացքի մեջ է:**
Գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու և հանրապետության պայմաններին համապատասխանող անվադողեր ներկրելու մասին	3	3		3		2 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի իրացումն իրականացվում է <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամ և ՓՄՁ-ի ներդրումներ ՈւՎԿ-ի միջոցներով: Միաժամանակ դիմումատուներին

						տեղեկացվել է, որ նրանց դիմումներն ուղարկվել է ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ, համապատասխան ընթացք տալու համար: 1 դիմումատուի տրվել են պարզաբանումներ տարբեր ընկերությունների կողմից արտադրված անվադողերի ներկրման հետ կապված հարցերի վերաբերյալ:
Վառելափայտ տրամադրելու մասին	11	11		11		11 դիմումատուի պարզաբանվել է, որ նախարարությունը պատրաստակամ է աջակցելու վառելափայտը նվազագույն արժեքով /1խմ՝ 7200 դրամ/ ձեռքբերման խնդրում: Ցանկության դեպքում դիմումատուները վառելափայտը կարող են գնել և սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխել ՀՀ Լոռու մարզի Դսեղի, Լալվարի, Ջիլիզայի և Տավուշի մարզի Իջևանի, Սևքարի, Նոյեմբերյանի <անտառտնտեսություն> մասնաճյուղերից:
Աշխատած ժամանակաշրջանի և աշխատավարձի չափի վերաբերյալ արխիվային փաստաթղթեր տրամադրելու մասին	5	5	4	1		1 դիմում վերահասցեագրվել է <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ:
Վտանգավոր սննդամթերքի իրացումն արգելելու մասին	3	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ սննդային գործոնով պայմանավորված թունավորումների հայտնաբերման դեպքում ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկացնում է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության

						պետական ծառայությանը, այնուհետև կազմակերպվում և իրականացվում են համատեղ միջոցառումներ՝ դրանց առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերման, նմուշառման և լաբորատոր հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Միաժամանակ առաջարկվել է սննդային գործոնով պայմանավորված թունավորման կասկածի դեպքում, դիմել բուժկանխարգելիչ հաստատություն: Բժիշկի կողմից սննդային գործոնով պայմանավորված թունավորման դեպքի հաստատման դեպքում սննդամթերքի ավտանգության պետական ծառայության կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ: **1 դիմում ընթացքի մեջ է:**
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի վարչական տուգանք նշանակելու մասին որոշումները վերանայելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործի քննության արդյունքում կայացվել են որոշումներ՝ վարչական տուգանք նշանակելու մասին: Հաշվի առնելով, որ վարչական տուգանք նշանակելու մասին որոշումները վերանայելու վերաբերյալ դիմումները ներկայացվել են <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ

						օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված ժամկետը լրանալուց հետո, նրանց կողմից ներկայացված դիմումները մերժվել են: Համաձայն <<Վարչարարության և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի՝ բողոքարկման ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի:
Տարաբնույթ հարցեր (գրքի հրատարակման հարցում օժանդակություն ցուցաբերելու, տնկանյութ տրամադրելու, փողոցի լուսավորության համար բնակիչներից գումար հավաքագրելու, հարկեր չվճարելու արտոնություն տալու, ոռոգման ջրի և հողի հարկի վճարումից ազատելու, հոդված պատրաստելու նպատակով առանձին հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու, վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու փոխարեն պտղատու ծառերի տնկիներ հատկացնելու, ոռոգման ջրի անբավարար մատակարման պատճառով կրած վնասը փոխհատուցելու, կարտոֆիլի և կաղամբի իրացման գործընթացը կանոնակարգելու մասին և այլն)	22	22	1	21		1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ Արարատի մարզպետարան, 1 դիմում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, 1 դիմում ՀՀ Կոտայքի մարզպետարան, 1 դիմում՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:
ԸՆԴԱՄԵՆԸ	**76**	**73**	**14**	**59**		**3 դիմում ընթացքի մեջ է:**

2. 2013 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 26 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբա-նում	Մերժվել է	Ծանոթություն
Վառելափայտ տրամադրելու մասին	1	1		1		
Ձկնաբուծության ոլորտում առկա հիմնախնդիրների մասին	1	1		1		
Սպանդանոցներ հիմնելու մասին	1	1		1		
Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած խոզերի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1	1		1		
Տոհմային երինջներ հատկացնելու մասին	7	7		7		
Գյուղատնտեսական կենդանիների բուժման վերաբերյալ մասնագիտական խորհրադատվություն տրամադրելու մասին	3	3	3			
Բույսերի պաշտպանության միջոցա-ռումների կազմակերպման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Պարարտանյութի օգտագործման տեխ-նոլոգիայի վերաբերյալ մասնագիտական խորհրադատվության տրամադրելու մասին	1	1	1			

Սերմնաբուծության զարգացման ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատ-վություն տրամադրելու մասին	3	3	3			
Գյուղատնտեսական մթերքների բացօթյա շուկաներում վաճառասեղան տրա-մադրելու մասին	7	7	7			
ԸՆԴԱՄԵՆԸ	**26**	**26**	**15**	**11**		